

ԷԶԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեսրոպյան տառերը լատինական ու հունական տառերից հետո առաջինը դարձան գոտեներքայան հրաշագործ տպագրության առարկա: ԺՋ դարի սկզբում, 1512 թվականին, հիմք դրվեց հայ գրի տպագրության:

Մակայն հայկական տպագրությունը իր սկզբնավորման հենց սկզբից և հետագա 260 տարիների ընթացքում սկսվեց ու ծավալվեց հայրենի հողից դուրս, Վենետիկում (1512), Հոտմում (1584), Լվովում (1616), Միլանում (1621), Փարիզում (1639) և այլուր:

Այդ տարիներին բուն հայրենիքում՝ Հայաստանում, տպագրության մասին խոսք չէր կարող լինել, որովհետև նա իր պետականությունը կորցնելուց հետո մասնատված էր և հալածանքի էր ենթարկված օտար, քարաբառու տիրապետությունների ներքո: Ահա այդ պատճառով էլ հայ տպագրիչները մեծ ջանքերով և զոհողություններով կարողացան ելք գտնել հայրենի երկրից մատուցելու և հայերեն գրքեր տպագրել եվրոպական զանազան քաղաքներում և մեծ դժվարություններով հայրենի երկրին մատուցելու նրան այնքան անհրաժեշտ մեսրոպատառ գրքեր:

Էջմիածնի կաթողիկոսների համար երազանք էր դարձել մայր երկրում տպարան ստեղծելու հարցը:

Այդ երազանքը կարողացան է իրականություն դարձնել նշանավոր հայ հասարակական-քաղաքական գործիչ Միսեոն Երևանցի կաթողիկոսը (1768—1780):

Տպարան հիմնադրելու միտքը նրա մեջ հղացել էր դեռ կաթողիկոս ընտրվելուց 20 տարի առաջ, երբ նվիրակ էր Հնդկաստա-

նում: Նրան այդ միտքը ներշնչել էր մադրասարենակ ջուղայեցի մեծահարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան-Չաքիկյանցը, որը խոստացել էր հոգալ տպարանի հիմնադրման ամբողջ ծախսը: 1770 թվականին Հնդկաստանի նվիրակ Հովսեփ վարդապետի գրած նամակում այդ մասին կարդում ենք. «Ես, սուրբ Էջմիածնայ նուիրակ Յովսեփ վարդապետս գիրս ձեռայցագրով և իմ մոհրովի մոհրածս տուի պարոն Գրիգոր Լուսայհոգի Միքայելին, որ հենքն խոստացեալ ա, որ 9000 ոսկի հենքն կտայ, եթէ սըրբազանն սուրբ Աթոռումն մեն տպագրատուն հաստատել, մշտնջենաւոր որ մեր հայոց գրքերն միշտ ստամբայ տան իւրն ծնողացն յիշտակ մնա: Եղև Մադրասումն իմով ձեռամբ գրեցի և կնքեցի թիւն Փրկչին մին հազար եօթն հարիւր եօթանասուն և ամենն, սեպտ. ԺԲ-ին: Վերջ: Նուիրակ Յովսեփ վարդապետ»¹:

Միսեոն Երևանցին տպարանի հատար պատրաստի տառեր չկարողացավ ձեռք բերել և որոշեց հենց վանքում, երիտասարդ, շնորհալի հոգևորականների օգնությամբ պատրաստել տառեր, փորագրություններ, զարդագրեր և այլ անհրաժեշտ պարագաներ: Մկրտիչ արքեպիսկոպոս Ծոռոթեցին ստանց մասնագիտական կրթության, իր բնական ընդունակություններով փորագրում է բոլորագիր, ևսորգիր ու գլխագիր հայկական տառեր, որոնցով և տպագրվում է առաջին գիրքը: Նկարիչ ու քանդակագործ Հարություն Էջմիածնեցին քանդակում է խորաններ, նկարներ, զարդագրեր ու ծաղկազարդեր, որին աջակերտում է խաչատուր դպիրը: Գրաշարներն էին Հովսեփ վարդա-

* Հայաստանի առաջին տպարանի մասին տես նաև ՊԲՀ. 1968, № 1, էջ 262—266, մեր համառոտ հաղորդումը:

¹ Մատենադարան, Արխիվ. բաժին, Կաթողիկ. դիվան, թղթ. 4, վավ. 6:

պետր, Եփրեմ սարկավազը, տպագրիչները (մրազարկ ու տպող)՝ Գրիգորն ու Մանուկը։ Իսախան Գեղամացին զբաղվում է խմբագրական ու սրբագրական աշխատանքներով և 3 տարի հետո դառնում է տպարանի կառավարիչն ու կարգադրիչը։

Տպարանի առաջին արգասիքը Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի Զրօսարան հոգևոր գիրքն է, որը տպագրվեց 1772 թվականին, որից երկու օրինակ պահպանվել է Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածուում 1497 և 1695 համարների տակ և Պետական հանրապետական գրադարանի անձեռնմխելի հավաքածուում մեկ օրինակ²։


Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի Զրօսարան»-ը գրքի վերջում ունի շատ բովանդակային, ընդարձակ հիշատակարան (էջ 174—182), որն ի դեպ կարևոր տեղեկություններ է տալիս ժամանակակից քաղաքական անց ու դարձի և տպարանի պատմության մասին։

Սիմեոն Երևանցին տպարանի մուտքի ճակատին փորագրել է տալիս քարե հուշատախտակ, որի վրա գրված է. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս ճոր ի ճորոյ ի տարբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիցն, հոգաբարձութեամբ տեսուն Սիմեոնի կաթողիկոսին Երևանցոյ, արդեամբ ջողայեցի և ի Հինդ բնակեալ բարեպաշտուն Գրիգոր աղային Խօջաջանեան մականոմար Զարկեանց, ի յիշատակ իրեան և իր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն... թվ. ՌՄԻ [1771]»։

Գրիգոր Զարկեյանցին 1773 թ. գրած մամուլում մեծագործ կաթողիկոսը հայտնում է այդ հուշատախտակի մասին և գրում է ճան, որ այդ նույն տարին (1773 թ.) տպարանի շենքը ընդարձակել է և բարեկարգել։ Այդ մասին իր մամուլում կարդում ենք. «Չուպագրատունն սակա ինչ փոքրիկ էր, յայն ամի մեծացուցար, զի ամենայն գործոց և գործավարաց նոցի, ընդարձակ տեղիվ լինիցին մերձ միմեանց...»³։

Հովհաննես եպիսկոպոս Ծաֆյաթունյանը իր «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի» երկհատոր աշխատության⁴ Ա հատորի 97-րդ

էջում տպարանի մասին գրում է. «1773 թվականին ընդարձակվում է ու բարեկարգվում... «կից յարևմտեան ծայր ձմեռային կացարանի կաթողիկոսաց»։ Հետագայում Ղուկաս կաթողիկոսի ջանքերով տպարանը փոխադրվում է ընդարձակ, կամարաձևով խոհանոցի տեղը, սեղանատան մոտ, որը կից էր ներքին պարսպի մեծ դռանը, արևմտյան կողմից»։ Թեոդիկը գրել է. «Ղուկաս կաթողիկոսի ջանքերով, որ տպարանը շեն-



Սիմեոն Երևանցու մամուլը Գ. Զարկեյանցին, 1773 թ.

ցունելու փոքր տարա և տեղափոխեց զայն ի վերաշինել տաւ խոհանոցը»⁵։

Հակոբ Մեղապարտից, Ոսկան Երևանցուց ու Խաչատուր Կեսարացուց հետո, Սիմեոն Երևանցին իր հիմնադրած տպարանով նոր սխրագործություն կատարեց հայ գրատպության և հայ մշակույթի զարգացման գործում։ Նրա «Գիրք աղօթից»-ի տպագրությունը չափազանց մեծ իրադարձություն էր հայ ժողովրդի մշակութային կյանքում։

Տպարանը գործի դրվելուց հետո Մայր Աթոռում զգացվում է թղթի մեծ պաշարի առանձնակի կարևորությունը և ահա 1776 թ. անցկարագրելի ծանր պայմաններում անկարելին կարելի դարձնող Սիմեոն Երևանցուն հաջողվում է հիմնադրել թղթի գործարան Էջմիածնում։ Այդ մասին արխիվային բազ-

² Թեոդիկը այս գրքի Գ տպագրության (1793 թ.) տիտղոսաթերթին է ցուցադրել իր «Տիպ ու տառ»-ի միջ (էջ 176)։ Հասկանալի է, որ նա չի տեսել առաջին տպագրությունը։ Նա ենթադրում է, որ 1772 թ. լույս տեսած «Տաղարանը» «իբ անարուեստ տիպին համար, շատ հաւանական է, որ երևան չի հանուած» (էջ 177)։

³ Մատենադարան, Արխիվ. բաժին, Կաթող. դիվան, թղթ. 4, վավ. 35։

⁴ Հովհ. եպիսկոպոս Ծաֆյաթունյան, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի, Ա հատոր, էջ 100։

⁵ Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 177։

մաթիվ վավերագրեր են պահպանվել Էջմիածնի կաթողիկոսական դիվանի արխիվում⁶։ Այդ գործարանից ստացված թուղթը օգտագործվել է Մայր Աթոռի կարիքների համար, բայց այնուհանդերձ այդ թղթի վրա է տպագրվել Սիմեոն Երևանցու **Գիրք, որ կոչի պարտավճար**-ը, տպագրված 1779—1783 թվականներին, որի մասին գրքի տեքստի վերջում տպագրված ռուսնավորի առաջին տողում կարդում ենք հետևյալ բառակերպը.

«Նոր թուղթ, նոր գիր, նոր տպարան, Բանք և ըզնոր ի լոյս ածան, Յատուկ պարգևք նորոգական Ազգիս հայոց պարգևեցան...» (Էջ 374—376)։

«Գիրք, որ կոչի պարտավճար»-ի տպագրությունը սկսվել է Սիմեոն Երևանցու օրոք, 1779 թ., բայց սկսված պատերազմի և կաթողիկոսի հիվանդության պատճառով, որի մասին գրված է գրքի հիշատակարանում (Էջ 377—380), տպագրությունը ավարտվում է 1783 թ. փետրվարին, նրա մահվանից հետո, Ղուկաս կաթողիկոսի օրոք։ Սիմեոն Երևանցու օրոք տպարանում լույս տեսած գրքերից մեզ հայտնի են.

1. Սիմեոն Երևանցի—**Գիրք աղօթից, որ**

կոչի Զբոսարան հոգևոր	1772 թ.
2. Սիմեոն Երևանցի Տօնացոյց	1774 թ.
3. « » Տաղարան	1777 թ.
4. Կարգ թաղման կարգաւորաց	1777 թ.
5. Սիմեոն Երևանցի— Գիրք, որ կոչի պարտավճար	1779—1783

Պետք է ասել, որքան էլ այդ զարմանալի թվա, Հայաստանի առաջին տպարանի գործունեությունը մեր բանասիրության մեջ անհրաժեշտ ուշադրության չի արժանացել։ Այն դեպքում, երբ Հայաստանից հազարավոր կիլովետրեր հեռու գտնվող Վենետիկի, Մարսելի, Պետերբուրգի և այլ քաղաքների հայկական տպարանների գործունեությունը լուրջ ուսումնասիրության առարկա է դարձել, Էջմիածնի տպարանի աշխատանքը շատ կողմերով մնացել է չլուսաբանված։

Մատենադարանում մեր երկարամյա աշխատանքի ընթացքում փորձել ենք հնարավորին չափով լրացնել այդ գործում եղած բացերը, մանավանդ որ Էջմիածնի տպարանի պատմության համար ոչ մի գրադարան և արխիվ այնքան հարուստ նյութեր չեն կարող տրամադրել, ինչպիսին Մատենադարանը։

Երկար պրպտումների շնորհիվ տպագիր գրքերի հավաքածուներում հնարավոր եղավ հայտնաբերել ԺԸ դարի վերջում և ԺԹ դարի սկզբում Էջմիածնի տպարանում տպագրված այնպիսի գրքեր, որոնք անհայտ էին մնացել մեր բանասերներին և մատենագետներին։ Հենց այդ գրքերի տպագրման փառոտի, ինչպես և նրանց հիշատակարանների պարունակած տվյալների շնորհիվ պարզվեցին Էջմիածնի տպարանի պատմության մի շարք մութ կողմեր։

Դրանցից ամենակարևորն այն է, որ Էջմիածնի տպարանը 1819—20 թվականներին ունեցել է իր գործունեության երկրորդ շրջանը, որն ամբողջապես անհայտ է եղել մեր բանասերներին։

Հայտնի է, որ Սիմեոն Երևանցու մահվանից հետո, Ղուկաս կաթողիկոս Կարնեցու օրոք, Էջմիածնի տպարանում տպագրվել են Սիմեոն Երևանցու «Պարտավճար»-ը, հետո, 1785 թ., լույս է տեսել շքեղ, գեղեցիկ նկարներով ու մաքուր տպագրված մի ժամագիրք, իսկ 1787 թ.⁷ Հովսեփ Փլաքիոսի **Գիրք պատմության** աշխատությունը, Ստեփանոս Լեհացու թարգմանությամբ։ Մատենադարանի ձեռագրերի շարքում կա Հովսեփոս Փլաքիոսի պատմության հայերեն թարգմանության Ստեփանոս Լեհացու ձեռագիր օրինակը, որը և հիմք է ծառայել սույն տպագրության համար⁸։ Այս մասին գրքի հիշատակարանում կարդում ենք. «...և մինչ սկսաք տպել զգիրքս, թեպետ և եկին ի ձեռս օրինակք գրեցեալք յայլ գրչաց, ոմանք ստոյգք և ոմանք սխալք, այլ մեք զայն... ի հեղինակէն առաք, այս ի ձեռագրէն, գորնոյն ինքն ի լովցի տէր Ստեփանոս վարդապետն իւր ձեռամբ էր գրեալ, որ և նոյնն եղեալ կայր ի գրատունն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Յորմէ օրինակեցաք զտպեալս» (Էջ 495—496)։

Ղուկաս Կարնեցու օրոք լույս տեսած 8-րդ գիրքը **Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան** է, տպագրված ՌՄԼԶ (1787) թվականին։ Այս Սաղմոսարանը անհայտ էր մնացել մեր մատենագիտությանը, որից մեկ օրինակ պահպանվել է պետական պատմական թանգարանի գրադարանում և կրում է 464 համարը։

Սաղմոսարանից հետո, 1788 թվականին, Էջմիածնի տպարանում տպագրվել է նաև մի **Խորհրդատետր**, որը նույնպես անհայտ էր մնացել մեր մատենագետներին։ Այնուհետև, մինչև տպարանի երկարամյա փակ-

⁶ Տե՛ս Հ. Արրախանյանի արխիվային այդ վավերագրերի հիման վրա գրված «Թղթի գործարան Հայաստանում» հոդվածը Մատենադարանի «Գիտ. նյութ. փոյ.», № 1, Ե. 1941. էջ 61—72։

⁷ Յովսեփոս Փլաքիոսի պատմության գրչագիր օրինակներից 4-ը գտնվում են Մատենադարանում։ Ստեփանոսի ձեռքով գրվածը պահվում է 1900 հա. մարի տակ։

վելը, մեր մատենագիտությունը նշում է ևս երկու գիրք: Մեկը 1789 թ. տպագրված **Ծարակնոցն** է, մյուսը՝ Սիմեոն Երևանցու Տաղարանի 1793 թ. վերատպությունը:

Ղուկաս կաթողիկոսից հետո, ներառյալ նաև Դավիթ և Դանիել կաթողիկոսների աթոռակալության տարիները, Էջմիածնի տղաքարանը երկար ժամանակով դադարում է գործելուց⁸: Թեոդիկը այդ տպարանական դադարի մասին այսպես է արտահայտվում. «1793 թուականին վերջ, կես դար շարունակող տպարանական ամլություն մը կը տիրէ Էջմիածնին, վերագրելի քաղաքական դէպքերու, որոնք կը տանգնապեցուցանեն Հայ աշխարհը, հետևապէս նաև ա. Աթոռը: Յովհաննէս Ը Կարբեցու օրոք միայն, 1842-ին կը տպուի Յ. Ծախխաթունեանի **Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի** շահեկան երկհատոր գիրքը»⁹: Իսկ Գ. Լեոնյանը այդ դադարը հասցնում է մինչև 1838 թվականը, երբ լույս տեսավ «Հարիւր և չորս պատմութիւն հաւաքեալ ի Հին և Նոր կտակարանէ» ռուսերենից թարգմանված գիրքը¹⁰:

Սակայն, Մատենադարանի տպագիր գրականության բաժնում Էջմիածնի տպարանում տպագրված գրքերը պրոպետիա հայտնաբերեցինք մի **Սաղմոսարան**, որը լույս է տեսել 1819 թվականին, Եփրեմ կաթողիկոսի օրոք: Այս տարեթիվը, ինչպես կնկատեք, հեռու է թե՛ Թեոդիկի սահմանագծած 1842-ից և թե՛ Գ. Լեոնյանի 1838 թվականից: Սաղմոսարանի տիտղոսաթերթի վրա կարդում ենք. «Սաղմոս Դավթի, որ և կոչի Սաղմոսարան, տպագրեցեալ ի մեծի Աթոռոյ Էջմիածնի, հրատմանա Տեառն Եփրեմի... կաթողիկոսի Ամենայն Հայոց ի թուոյն մերում 1268 այսինքն (1819)»¹¹: Այս Սաղմոսարանից առաջին հայնաբերված է այս միակ օրինակը:

Դարգվում է, որ Եփրեմ կաթողիկոսը վերանորոգել է գործի է դրել երկար տարիներ անգործության մատնված տպարանը: Այդ Սաղմոսարանի հիշատակարանի մեջ առված է. «...Արդ որք լանդիման լինիք սովա, մի ձանձրասչիք յիշել... յօգնաշխատ կաթողիկոսն և մանաւանդ զվերանորոգողն տպարանիս զՏէր Եփրեմ յօգնալիշտ սրբազան վեհապետն, որ ի նեղութեանս ժամանակի գերագոյն քան զառաջինն պայծառացոյց և գրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն սրբոյ զահիս... (Ընդգծումը մերն է—Օ. Ծ.)

⁸ Ա. Երիցյան, Պատմական տեսությունն հայ տպագրության, Տփլիս, 1879, էջ 26:

⁹ Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 177:

¹⁰ Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե, 1958, էջ 215:

¹¹ Մատենադարան, Հայ գրական, հավաքածու, № 22138:

զխանգարեալն քաղում ամաց հետէ» (էջ 414—415): Տպարանի վերահաստատման ծախսը հոգում է մահտեսի Եղիա Հակոբյանը, որը մահացել է Հնդկաստանում: Նրա կտակակատարն էր ջուղայեցի մադրասաբնակ Վարդան Գասպարյանը:

Եփրեմ կաթողիկոսի օրոք, 1820 թվականին, Սաղմոսարանից մեկ տարի հետո, լույս է տեսնում նաև **Կտակ վասն փրկագործ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ...** Ֆիսուսի Քրիստոսի գիրքը, որը նույնպես անհայտ էր մնացել քանասիրությանը:

Այսպիսով, Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարբեցու ժամանակներից հետո տեղի ունեցած երկարատև դադարի ընթացքում տղաքարանի գործունեության երկրորդ շրջանը պետք է համարել Եփրեմ կաթողիկոսի օրոք եղած տպարանային գործունեությունը:

Ինչպես տեսնում ենք հայրենիքում տպագրական մամուլ աշխատեցնելու ձգտումը ամեն հարմար առիթով գործի է վերածվել:

Հայտնի է, թե ինչ վիճակ էր Հայաստանում ԺԸ դարի վերջում և ԺԹ դարի սկզբին: Անվերջ պատերազմներ տեղական խաների ու փաշաների միջև, ապա աղա Մահմեդ խանի արշավանքը, ռուս-պարսկական պատերազմները, Դավիթ-Դանիելյան հակամարտությունները Էջմիածնի մեջ: Եվ չնայած այդ ամենին, ահա պարզվում է, որ Մայր Աթոռում հարմար պահ են գտել 1819—20 թվականներին տպարանը նորից գործի համար:

Այս երկու գրքերից հետո նորից տպարանը դադարում է գործելուց: Մեր ձեռքի տակ եղած տվյալները ասում են, որ 13 տարվա դադարից հետո նա վերսկսում է իր գործունեությունը, այս անգամ Հովհաննէս Կարբեցի կաթողիկոսի օրոք, 1832 թվականից:

Տպարանի աշխատանքի այս Գ շրջանն էլ ավելի շուտ է սկսվում, քան ենթադրում են Գ. Լեոնյանը (1838), Թեոդիկը (1842) և մյուս քանասերները:

Հովհաննէս Կարբեցու օրոք տպագրված գրքերից առաջինը մի **Զայնքաղ Ծարական** է, որը լույս է տեսել 1833 թվականին և անհայտ էր մեր մատենագիտությանը: Կարբեցին կաթողիկոս է ընտրվել 1831-ին, երբ Մայր Աթոռը նախորդ կաթողիկոսներից մնացած մեծ պարտքերի հետևանքով տընտեսական ծանր դրության մեջ էր: Նրան հաջողվում է վճարել այդ պարտքերի մեծ մասը և 1833 թ. միայն կարողանում է ավարտել տպարանի վերանորոգումը և մեկը մյուսի հետևից գրքեր լույս ընծայել: Տպարանի վերանորոգման ծախսը վճարում է կարբեցի Հովսեփ եպիսկոպոս Մարությանցի փեսան՝ Սահակը, և քույրը՝ Եղիաբեթը: «Զայնքաղ Ծարական»-ի հիշատակարանի

մեջ կարդում ենք. «Արդ՝ որք վայելէք գնո-
գեշուն՝ երգարանս յիշեսցիք... զվերահաս-
տատոյն տպարանիս... Յովհաննէս Կարբե-
ցի... կայտողիկոսն Ամենայն Հայոց, որ յետ
վճարելոյն մեծ մասն պարտոց արդոյ Աթո-
ռոյս հոգ կալաւ մեծաթան աշխատութեամբ



Գիրք Աթոքից. ա. Էջմիածին, 1772 թ.

և վասն շինութեան և զպայծառութեան սո-
րին, որ ահա իբրև զիր առաջին նախախաջ
պտուղ գտոյն երգարան ի լոյս ընծայեաց
վերստին տպագրութեամբ:

Էջմիածնի տպարանն այս անգամ իր աշ-
խատանքը վերականգնում է, երբ Ռուսաս-
տանը արդեն գրավել էր Արևելյան Հայաս-
տանի հիմնական մասը, Էջմիածնի հետ
միասին: Տպարանը ջանասիրությամբ շարու-
նակում է իր գործունեությունը: Այդ նույն
տարին, 1838 թ., լույս է տեսնում Սիմեոն
Երևանցու **Գիրք հանդիսադրութեանց տունից**
կաշտերականաց աշխատության. Գ. հրատա-
րակությունը, իսկ 1835 թ.՝ նույն՝ երանելի
կայտողիկոսի **Յոնացոյցի** Գ. հրատարակու-
թյունը: Այս երկու գրքերն էլ դուրս են մնա-
ցել մեր մատենագիտության ցանկերից: 1836
թվականին տպագրվում է **Գիրք որ կոչի**
Մաշտոց-ը: Այս Մաշտոցը նույնպես չկա
մեր մատենագիտական աշխատությունների
մեջ, միայն հ. Ա. Ղազիկյանի «Հայկական
նոր մատենագիտություն» հարուստ և շատ
արժեքավոր աշխատության մեջ «Մաշտոց»

հատվածում ԻԳ. հրատարակությունը հա-
մարվում է Էջմիածնի 1836 թ. տպագրությու-
նը, սակայն նա այդ Մաշտոցը չի տեսել և իր
կարծիքը դնում է հարցականի տակ:

Այնուհետև շատ մեծ հետաքրքրություն է
ներկայացնում 1839 թվականին լույս տեսած
811 էջանոց մեծադիր, գեղեցիկ խորանով,
փորագրություններով ու զարդանկարներով
հարուստ **Շաշոց գիրք-ը**: Այս հրաշալի
զարդարված ժաշոցը նույնպես անհայտ է
եղել մեր մատենագիտության: Նրա մասին
հիշատակություն չկա ո՛չ Ղազիկյանի, ո՛չ
Թեոդիկի և ո՛չ էլ հ. Գ. Զարպանապյանի
մատենագիտական աշխատությունների մեջ:
1840 թվականին լույս է տեսել **Խորհրդա-
տետր սրբազան պատարագի-ն**, իսկ 1841-
ին՝ **Կերակուր քահանայից-ը**: 1842-ին տպա-
գրվել է Հ. եպիսկոպոս Ծափաթունյանի
Ստորագրութիւն կայտողիկէ Էջմիածնի և
հինգ գաւառացն Այրարատայ երկհատոր
գիրքը: Այդ թվականին է լույս տեսել նաև
Կարապետ արկ. Ծափազարյանի **Արքեպի-
սկոսաբանութեան դասագիրքը**, որը նույնպես
անհայտ էր մատենագիտությանը: Կարա-
պետ վարդապետ Ծափաթունյանը Էջ-
միածնի ընդունակ ու շնորհալի միաբաննե-
րից էր¹²:

Հովհաննէս Կարբեցու (1831—1842) օրոք
տպարանի կառավարիչն էր Հովհաննէս
վրդ. Նախիջևանցին: Տպարանում աշխա-
տող վարպետներն էին Գևորգ Արարատ-
յանը, Վլասիոս Հակոբյանը, գրաշարներն
էին Վարդան Բունիաթյանը, Գրիգոր Ժամ-
հարյանը, «Մրագարկը»՝ Կարապետ Գրի-
գորյանը, տպագրիչները՝ Ավետիս Հովհան-
նիսյանը և այլք:

Հայ հնատիպ տպագիր գրքերը հարուստ
են զարդանկարներով, թույնագրերով, խո-
րաններով, լուսանցազարդերով, ոճավոր-
ված սկզբնատառերով: Եվ այդ նկարազար-
դումները գալիս էին որպես շարունակություն
ձեռագրերի մանրանկարչական արվեստի:
Այդպիսի նկարազարդումներով հարուստ են
նաև Էջմիածնի տպարանում տպագրված
գրքերը: Այդ տեսակետից աչքի է ընկնում
1839 թվականին տպագրված «Շաշոց
գիրք-ը», որի 2-րդ էջին կա մի խորան, որը
ոճավորված է ա. Թադեոսի, ա. Բարթողի-
մեոսի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի
և այլոց նկարներով: Մեր փորագրիչ-նկա-
րիչների անունների հետ ծանոթանում ենք
գրքերի հիշատակարանների միջոցով, սա-
կայն 1839 թ. Շաշոցի խորանի ամենաներ-
քնվի տողի վրա շատ մանր տառերով կար-

¹² Կ. Կոստանյան, Կ. Ծափազարյանի կենսագրու-
թյունը:

դացվում է «Ջնտամբ Յարութինի»։ Իսկ այդ նույն ժաշոցի մի այլ խորանի հակառակ էջին, մի փորագրության վրա, որը պատկերում է նորածին Հիսուսը մսուրի մեջ, ներքևում կարդում ենք. «Վլա Յկ (Վլասիոս Յակոբեան)։ Վլ. Հակոբյանը Կարբեցու ժամանակաշրջանի տպագրատան նկարիչն էր, իսկ Հարություն Էջմիածնեցին՝ Միմեոն երեվանցու և Դուկաս Կարնեցու։ Ենթադրում ենք, որ Հարությունի փորագրած խորանը, որ օգտագործվել է սույն ժաշոցի մեջ, պատկերվել է հնուց և այժմ օգտագործվել է։

Հովհաննես Կարբեցուց հետո, Ներսես Աջտարակեցու (1843—1858) օրոք տպագրված գրքերից հայտնի են Աբել վրդ. Մխիթարյանի ուսերենից թարգմանված Հրահանգ համաշխարհային պատմությանը, Գ. Լեւոնյանի Աղբիւր բացնալ, Հ. եպս. Շահխաթունյանի Երգարան աղօթից ի պետս վաճառականաց և ճանապարհորդաց, Սաղմոս Դաւթի և Ժամագիրք ա. աստուածաշնորհ թարգմանացն գրքերը։

Մատթեոս Ա-ի (1858—1865) օրոք շարունակվում է տպարանի գործունեությունը։ Այդ ժամանակաշրջանի գրքերից կուզենին հիշատակել Ծարական հոգևոր երգոց ա. և ուղղափառ եկեղեցույա Հայաստանեայց 782 էջանոց գիրքը, Ժամանակագրություն Հայաստանեայց եկեղեցույ, յորում պարունակեն 8 գիրք, Սաղմոս Դաւթի, Ատենի ժամագիրք և Տօհացոյց և Ներսես Շնորհալու Թուղթ Ընդհանրականը-ը։

Հայ ժողովրդի մտավոր զարգացմանը և ստաջադիմությանը լայն թափ հաղորդեց Գևորգ Դ կաթողիկոսը (1866—1882)։

Գևորգ Դ-ը նպատակադրել էր Էջմիածինը հայ ազգի լուսավորության կենտրոնը դարձնել։

Սակայն Էջմիածնում նրա հիմնած կրթական այդ բոլոր հաստատությունները՝ ամսագիր, ճեմարան չէին կարող իրենց գործունեությունը ծավալել առանց գրքի և գրականության։ Նա դեռ իր ձեռնադրման առաջին տարվանից զգաց տպարանի կարևորությունը և անհրաժեշտությունը և որոշեց Մայր Աթոռում եղած տպարանը վերականգնել ու լայն թափ տալ հայ գրքի տպագրությանը։ Պետերբուրգից Մկրտիչ Սանասարյանի և Հովհաննես Հովհանյանի նվիրատվություններով ձեռք բերեց անհրաժեշտ մեքենաներ, գրքեր և այլ պարագաներ։

Նրա օրոք լույս են տեսել պատմական, հնագիտական, քանասիրական, մանկավարժական, եկեղեցական, երաժշտական բովանդակությամբ բազմաթիվ գրքեր և դասագրքեր։ Այդ ժամանակաշրջանում տպագրվեցին այնպիսի կարևոր պատմական-հնագիտական նշանակություն ունեցող գրքեր, ինչ-

պիսիք են Զաքարիա սարկավազի պատմագրությունը երեք հատորով, 1870, Աբրահամ Կրետացու Պատմագրություն անցիցն իրոց և Նատր-Շահին Պարսից, 1870, Միմեոս Համդեցու Ազգաբանություն հայոց, 1870, Ա. Մխիթարյանի Տեղագրություն Մարմաշենոյ վանացն ի Ծիրակ, 1870, Ա. Մխիթարյանի Պատմություն Հոռոմոսին վանաց ի Ծիրակ, 1870, Ա. Ապարանցու Վիպասանություն սակս Պահլավունեացն զարմի և Մամիկոնեացն



Զայեքալ Ծարական, ա. Էջմիածին, 1888 թ.

սեռի, 1870, Ա. Գուլամիրյանի հրատարակությամբ Ընտիր պատմություն Դաւթի բեկին և պատերազմաց հայոց Խաթանու, 1871, Ե. Մանկունու Այրիվանք կամ Գեղարդայ վանք, 1871, Մ. Կյումյուշխանեցու Պատմություն անցից անցելոց Սեանայ վանոց, 1871, Ուխտանեսի Պատմություն հայոց, Պատմություն բաժանման Վրաց ի Հայոց, հատոր Ա. և Բ., 1871, Հակոտհատուգենի Ժամապարհորդություն լայս կոչս Կովկասու, ի Հայս և ի Վիրս, թարգմ. Վ. Սեդրակյանի, 1872, Ա. Սեդրակյանի Հնությունք հայրենեաց ի զաւսոն Երեւակայ, 1872, Ա. Մխիթարյանի Ստորագրություն հոշակաւոր մեծի ուխտին Այրի վանայ ա. Գեղարդայ, 1873, Սիմեոն

Երևանցու Զամբո-ն, 1873, Ա. Մխիթարյանի Վաղարշապատ, քաղաքամայր Հայաստանի, 1874: Ապա եկեղեցական բնույթի Փոքր Մաշտոց, 1870, Գիրք սաղմոսաց Դաթի, 1871, մաշոց գիրք, 1872, Զայնագրեալ շարական հոգևոր երգոց սուրբ և ողորակառ եկեղեցու Հայաստանեայց: Սույն ձայնագրյալ շարականը 1092 էջանոց հոյակապ մի գիրք է: Նա ուշադրության արժանի մի աշխատություն է, որի մեջ հոգևոր երգերը տպագրված են հայկական ձայնանիշերով, 1875, երգք ձայնագրեալք ի ժամագրոց Հայաստանի ս. եկեղեցու, 1877, և այլն, և այլն: Ծառ մեծ է մրա օրոք տպագրված գրքերի ցանկը, որն անհնարին է ամբողջությամբ մեջ բերել այստեղ:

Գևորգ Դ կաթողիկոսին 1885 թվականին հաջորդեց Մակար Ա Թեղատցի կաթողիկոսը: Մակար կաթողիկոսը իր գահակալության ընթացքում (1885—1892) օգտաշատ գործունեություն ցուցաբերեց վանքի և հայ մշակույթի համար: Նրա Աշանավոր աշխատանքը Մայր եկեղեցին հիմնական վերանորոգման ենթարկելն էր և տպարանի համար նոր շենք կառուցելը: Նոր տպարան կառուցելուն առիթ դարձավ այն հանգամանքը, որ մինչ այդ հրապարակի վրա չկար Մայր Աթոռի հսկողությամբ լույս տեսած Աստվածաշունչ:

Տպարանը գեղեղված էր հին վարժարանի խարխուլ շենքում և գործում էր ձեռքի մամուլներով: Արագատիպ մամուլներ այդ շենքում չէին կարող գործել: Անհրաժեշտ էր ունենալ հաստատուն, ընդարձակ շենք: 1889 թվականին վանքի բակից դուրս, արեւելյան կողմում գտնվող մեծ հրապարակի հարմարվյալ մասում, հիմնադրվեց տպարանի նոր շենքը: Նոր տպարանում կազմակերպվեցին առանձին բաժանմունքներ. ձուլարան, տպագրատուն, մթերանոց: Գրաշարներին հատկացվեց առանձին սրահ, որտեղ տեղավորված էին ձեռքի և երկու արագատիպ մամուլներ: Մակայն Մակար կաթողիկոսի օրոք չհաջողվեց Աստվածաշունչը տպագրել, որը հանձնարարված էր Օրմանյանին:

Մակար Ա կաթողիկոսի օրոք տպագրված գրքերից ուշադրության արժանի են 879 էջանոց Ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցու գրքի Բ, 1885 թ., և Գ հրատարակությունները, 1892: Դ. Երզնկյանի Հեախսական տեղագրություն Հայքստու աշխարհահոչակ վանից, 1886, Զայնաղ շարականը,

1888, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, հրատ. Վահան ծ. վրդ. հաստատյանի, 1888 թ., Մ. Փափազյանի Հնութիւնք վանորէից (6 գրքով) ֆոտոկոպրներով աշխատությունը, 1889, Է. Ռեկլյուի Ռուսական Հայաստան կամ Արաքսի առաջանը, 1890, և բազմաթիվ ուսումնական, եկեղեցական, բարոյախոսական բազմազան բնույթի գլրքեր:

Մկրտիչ Խրիմյան արժանափառապատկառ կաթողիկոսը (1893—1907) նույնպես մեծ ծառայություն է մատուցել տպարանի բարգավաճման գործին: Նրա օրոք Գլխոս քին. Աղանյանը գործողվում է Փարիզ և այնտեղից արագատիպ մեքենա բերում տպարանի համար: Հայերեն տառերի նոր տեսակներ են բերվում Վիեննայից ու Թիֆլիսից, և օտար լեզուներով տառեր են ստացվում Պետերբուրգից¹³:

Մկրտիչ կաթողիկոսի օրոք են լույս տեսնում այնպիսի արժեքավոր աշխատություններ, ինչպիսիք են Սամվել Անեցու Հաաքմունք ի գրոց պատմագրաց, 1894, Գրիգոր Լուսավորչի Յանախապատում ճառք լուսաւորք, 1894, 858 էջանոց Մաշտոցը, 1894, Կոմիտաս վարդապետի Ծար Ակնայ ժողովրդական երգերու (ձայնագրեալ), 1895, Ա. Դավրիժեցու Պատմութիւնը. 1896, Ի. Կոխլովի Առակք Յովհաննու Բոհլովի, ինն գիրք, 1896, Ե. Թովչյանի Յուցակ ձեռագրաց Դաղյան Խաչիկ վարդապետի, 1898, Կ. Կոստանյանի Մկրտիչ Նաղաշ և իր տաղերը, 1898, Մ. Ուրախեցու Ժամանակագրութիւն, 1898, Մ. Արեղյանի Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ, 1899, Հ. Աճառյանի Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան, 1899, Գարեգին վրդ. Հովսեփյանի Խոսրովիկ թարգմանիչ Ը դարու, 1899 թ.:

Բացի գիտական-բանասիրական այս աշխատություններից, Մ. Խրիմյանի օրոք լույս են տեսել բազմաթիվ այլ բնույթի, նույնպես շատ արժեքավոր գրքեր, որոնց ցուցակը բերել անհնարին է:

Էջմիածնի տպարանի գործունեությունը նույն թեղմավոր թափով շարունակվում է նաև Ի դարի երկու տասնամյակներում, որոնց մասին գրելը դուրս-եմ համարում մեր հոդվածի սահմաններից:

¹³ Գ. Առնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1946, էջ. 222: